ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) անդամի ի 2025 թվականի ապրիլի 27-ից 29-ը ընկած ժամանակահատվածում աշխատանքային այցով Եգիպտոսի Արաբական Հանրապետություն Եգիպտոսի մրցակցային մարմնի 20-ամյակի միջոցառման գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Մասնակիցների անուն, ազգանուն և զբաղեցրած պաշտոն.

- Անուշ Բեղլոյան – Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անդամ.

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Եգիպտոսի Արաբական Հանրապետություն, քաղաք Կահիրե, ապրիլի 27-ից 29-ը

Գործուղման հիմքը.

Եգիպտոսի մրցակցային մարմնի նախագահի հրավեր

3. Գործուղման նպատակը.

«Եգիպտոսի մրցակցային մարմնի 20 տարիները. կարևոր իրադարձություններ և ապագա հեռանկարներ» 2-րդ տարեկան Միջազգային համաժողովի նպատակն էր զարգացնել և խորացնել մրցակցության զարգացման ոլորտում առկա համագործակցության հեռանկարները, ծանոթանալ Եգիպտոսի մրցակցային մարմնի գործունեությանը և փորձին շահերի պաշտպանության, մրցակցության օրենսդրության կիրարկման և մրցակցային քաղաքականության վերաբերյալ:

4. Գործուղման արդյունքները.

Համաժողովի ընթացքում քննարկվել են հետևյալ հարցերը՝

- մրցակցության օրենսդրության կարևոր դերը համաշխարհային տնտեսական և սոցիալական մարտահրավերներին դիմակայելու և կայուն աճի խթանման գործում,
- խորհրդարանների և դատական համակարգի առանցքային դերը մրցակցային օրենսդրության ձևավորման համար
- մրցակցության օրենսդրության կիրարկման նշանակությունը տնտեսական աճի և ներդրումների խթանման գործում:
- դատարանների և մրցակցային մարմինների միջև շարունակական համագործակցության կարևորությունը, ներառյալ համատեղ վերապատրաստման սեմինարներ՝ բարձրորակ դատական ծառայություններ ապահովելու համար:

Համաժողովի ավարտական մասում տեղի ունեցավ Եգիպտոսի Մրցակցության պաշտպանության մարմնի հետազոտական մրցանակաբաշխության արարողությունը:

Այցի շրջանակում Հանձնաժողովի անդամը հանդիպում է ունեցել Ջորջ Վաշինգտոնի համալսարանի մրցակցության իրավունքի պրոֆեսոր և ԱՄՆ Առևտրի դաշնային հանձնաժողովի նախկին նախագահ Ուիլյամ Կովաչիչի հետ: Քննարկվել են միջազգային առևտրային շուկաներում տեղի ունեցող վերջին իրադարձությունները և դրանց ազդեցությունը մրցակցության վրա, մրցակցության մարմինների առջև առաջացող մարտահրավերները:

Առաջարկություններ և գործուղման արդյունքում ձեռք բերված պայմանավորվածություններ:

Եգիպտոսի մրցակցային մարմնի և համաժողովի մասնակից մրցակցային մարմինների ներկայացուցիչների հետ ձեռք է բերվել հետագա համագործակցությունն էլ ավելի խորացնելու, վերաբերյալ փորձի փոխանակման պայմանավորվածություններ:

X _____

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Մայիսի 5, 2025թ.